ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/55, 21.04.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ

Պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» գնանշման հարցում

Գնման առարկան՝ լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. Դադարեցնել թիվ 3 արձանագրությամբ «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները:
2. Նորից գնահատել 1-ին չափաբաժնի մասով մասնակիցների ներկայացրած հայտերը՝ գնահատման մեջ ներառելով «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի հայտը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ.ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոքաբեր՝
«Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ից
հիմնական պետական գրանցման համարը՝ 319715400026849
հասցե՝ Ռուսաստանի Դաշնություն, Տուլայի մարզ, Զեռնի շրջան, ավան Զեռն

«Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ Հարություն Օհանյան
նույնականացման քարտի տվյալներ՝ 004176392,
տրված 05.06.2014թ.-ին, 004-ի կողմից
հասցե՝ ՀՀ, ք. Երևան Արաբկիր 25փ., շ. 2/1, բն. 21
փաստաբանական գործունեության արտոնագիր՝ N 2710:

Պատվիրատու՝
Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ
հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր

ԲՈՂՈՔ

1. Գործի նախապատմությունը.

1.1. 19.03.2020թ.-ին «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն **(այսուհետև նաև՝ Պատվիրատու)** www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցում **(այսուհետև նաև՝ Մրցույթ)**: Մրցույթը բաղկացած է եղել երկու չափաբաժնից, որի 1-ին չափաբաժնով նախատեսվում է ձեռքբերել «Լուսատու FHB 03-230-50-D60 տիպի, կամ համարժեքը» **(այսուհետև նաև՝ Գնման առարկա)**: «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ն **(այսուհետև նաև՝ Մասնակից)** մասնակցել է Մրցույթին և 1-ին չափաբաժնի համար ներկայացրել է հայտ, որի գնային առաջարկը ՀՀ դրամով կազմել է 9834555.60՝ ինը միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսունհինգ դրամ վաթսուն լումա: Սակայն Մրցույթի գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել է՝ պատճառաբանելով, որ. «Էլեկտրոնային գնումների armeps համակարգում կցված չէ ИП Аветисян Айк Вазирович հայտի ապահովումը, ինչպես նաև մինչև հայտերի բացմանը հաջորդող աշխատանքային օրվա 17:00-ն այն չի ներկայացվել հանձնաժողովին: (...)»:

2. Բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստերը.

2.1. 19.03.2020թ.-ին Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ-ն www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցում: Մրցույթը բաղկացած է եղել երկու չափաբաժնից, որի 1-ին չափաբաժնով նախատեսվում է ձեռքբերել «Լուսատու FHB 03-230-50-D60 տիպի, կամ համարժեքը»: Հայտերի բացման նիստը նշանակվել էր 30.03.2020թ.-ի ժամը 16:00-ին:

2.2. Մրցույթի հրավերի 1-ին մասի 8.5 կետի համաձայն. «8.5 (...): Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ՀՀ ԿԲ 19.03.2020 փոխարժեքով:»:

2.3. ՀՀ Կենտրոնական բանկը ԱՄՆ դոլարի մասով ՀՀ դրամի նկատմամբ 19.03.2020թ.-ին սահմանել է հետևյալ փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլարը = 492.22 ՀՀ դրամին:

2.4. «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ն, «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ն, «Արմլեդ» ՍՊԸ-ն և «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն **(այսուհետև միասին նաև՝ Մասնակիցներ)** մասնակցել են Մրցույթին և 1-ին չափաբաժնին ներկայացրել են հայտեր, որոնց գնային առաջարկները հետևյալն են.

«Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ

Долларов США

Номера лотов	Наименовани товара	Себестоимость /прописью и цифрами/	Прибыль /прописью и цифрами/	НДС/прописью и цифрами/	Общая цена /прописью и цифрами/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	светильник	18 000 Восемнадцать тысяч	1 980 Одна тысяча девятьсот восемьдесят	0 Ноль	19 980 Девятнадцать тысяч девятьсот восемьдесят

«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

ՀՀ դրամ

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	Լուսատու	20000000 /քսան միլիոն/	4000000 /չորս միլիոն/	4800000 /չորս միլիոն ութ հարյուր հազար/	28800000 /քսանութ միլիոն ութ հարյուր հազար/

«Արմա Թրեյդ» ՍՊԸ
ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	Լուսատու	15770000 (Տասնհինգ միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար)	830000 (Ութ հարյուր երեսուն հազար)	3320000 (Երեք միլիոն երեք հարյուր քսան հազար)	19920000 (Տասնինը միլիոն ինը հարյուր քսան հազար)

«Էկրա Կովկաս» ՍՊԸ
ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	Լուսատու N1	21,590,909.10 (քսանմեկ միլիոն հինգ հարյուր իննսուն հազար ինը հարյուր ինը դրամ տասը լումա)	2,159,090.90 (երկու միլիոն մեկ հարյուր հիսունինը հազար իննսուն դրամ իննսուն լումա)	4,750,000 (չորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար)	28,500,000 (քսանութ միլիոն հինգ հարյուր հազար)

Մասնակցի գնային առաջարկը ՀՀ դրամով կազմում է 9834555.60՝ ինը միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսունհինգ դրամ վաթսուն լումա (=19 980 ԱՄՆ դոլար x 492.22 ՀՀ դրամ):

2.5. «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ն Մրցույթի 1-ին չափաբաժնին հայտեր ներկայացրած մասնակիցների թվից ներկայացրել է նվազագույն գնային առաջարկը:

2.6. 01.04.2020թ.-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ Մասնակցի էլեկտրոնային փոստին, Պատվիրատուն ուղարկել է Մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը **(այսուհետև նաև՝ Արձանագրություն):** Արձանագրության 5-րդ կետով գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել է, հետևյալ պատճառաբանությամբ. «Էլեկտրոնային գնումների armeps համակարգում կցված չէ ИП Аветисян Айк Вазирович հայտի ապահովումը, ինչպես նաև մինչև հայտերի բացմանը հաջորդող աշխատանքային օրվա 17:00-ն այն չի ներկայացվել հանձնաժողովին: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի

(Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունը, հանձնաժողովը որոշեց անբավարար գնահատել և մերժել ИП Аветисян Айк Вазирович մասնակցության հայտը:»:

2.7. Արձանագրությունը ստորագրված չէ և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում **(այսուհետև նաև՝ Տեղեկագիր)** հրապարակված չէ:

2.8. Մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը փաստաթղթերի գնահատման արդյունքում որոշել է՝ «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից և առաջարկել «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ին կնքել լուսավորման սարքերի և լամպերի մատակարարման պայմանագիր:

3. Բողոքի հիմքերը, փաստարկները.

3.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: (...)»:

Մրցույթի հրավերի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն. «մասնակիցը հայտով ներկայացնում է՝ 4) հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: (...):.»

Մրցույթի հրավերի 7.1-րդ և 7.2-րդ կետի (ա) ենթակետի համաձայն. «7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: (...):

7.2 Գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե՝ (...) ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա

հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: (...): Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է **10 մլն. ՀՀ դրամը**, սակայն ըստ **առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում**.»:

Վերոգրյալից հետևում է, որ գնման ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը ներկայացնում է հայտ, որը անհրաժեշտ է կազմել և ներկայացնել գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգին համաձայն: Հայտը գնահատվում է բավարար, եթե այն համապատասխանում է գնման ընթացակարգի հրավերի պահանջներին, հակառակ դեպքում մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է անբավարար և գնահատող հանձնաժողովը մերժում է այն: Այսինքն, եթե մասնակցի ներկայացրած հայտը համապատասխանում է գնման ընթացակարգի հրավերի պահանջներին, ապա այն պետք է գնահատվի բավարար:

Հրավերով սահմանված դեպքում Մրցույթին մասնակցելու հայտով մասնակիցը ներկայացնում է նաև հայտի ապահովում, մասնավորապես՝ եթե հայտով տվյալ չափաբաժնի համար մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, ապա այդ չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկի հինգ տոկոսի չափով մասնակիցը պարտավոր է ներկայացնել հայտի ապահովում, ընդ որում՝ եթե տվյալ չափաբաժնի համար մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում 10 մլն. ՀՀ դրամը, ապա այդ չափաբաժնի մասով հայտի ապահովում չի ներկայացնում: Այսինքն՝ հայտի ապահովումը ներկայացնելը անմիջապես կապ ունի ներկայացրած գնային առաջարկի չափի հետ: Եվ երբ որևէ չափաբաժնի համար մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում 10 մլն. ՀՀ դրամը, ապա այդ չափաբաժնի համար տվյալ մասնակիցը չի ներկայացնում հայտի ապահովում:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրահանգել, որ մասնակիցը չափաբաժնի մասով չի ներկայացնում հայտի ապահովում, եթե այդ չափաբաժնի համար մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում 10 մլն. ՀՀ դրամը: Այսինքն՝ հայտի ապահովում չներկայացնելու (Մրցույթի հրավերի 8.2 և 8.10 կետ) հիմքով մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, երբ որևէ չափաբաժնին 10 մլն. ՀՀ դրամը չգերազանցող գնային առաջարկ ներկայացրած լինելու պայմաններում մասնակիցը այդ չափաբաժնի մասով չի ներակայացնում հայտի ապահովում:

Այսպիսով, «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ն մասնակցել է Մրցույթին և 1-ին չափաբաժնին ներակայացրել է հայտ, որի գնային առաջարկը ՀՀ դրամով կազմել է 9834555.60՝ ինը միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսունհինգ դրամ վաթսուն լումա: Այսինքն՝ 1-ին չափաբաժնին Մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցել 10 մլն. ՀՀ դրամը, որպիսի պայմաններում Մասնակիցը հայտով Մրցույթի շրջանակներում հայտի ապահովում ներկայացնելու պարտավորություն չի ունեցել, քանի որ ինչպես փաստեցինք վերոգրյալով, եթե որևէ չափաբաժնին մասնակցի ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում 10 մլն. ՀՀ դրամը, ապա այդ չափաբաժնի մասով տվյալ մասնակիցը հայտի ապահավում չի ներկայացնում: Սակայն հաշվի չառնելով այդ հանգամանքը՝ Մրցույթի գնահատող հանձնաժողովը, վկայակոչելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունը, մերժել է Մասնակցի հայտը այն պատճառաբանությամբ, որ Մասնակիցը Էլեկտրոնային գնումների armeps համակարգում չի կցել, ինչպես նաև մինչև հայտերի բացմանը հաջորդող աշխատանքային օրվա 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել Մրցույթի 1-ին չափաբաժնի մասով սահմանված հայտի ապահովումը:

Վերը նշվածից կարող ենք փաստել, որ հայտի ապահովում չներկայացնելու հիմքով Մասնակցի հայտը մերժելով Մրցույթի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ մասնակցելով Մրցույթի 1-ին չափաբաժնին՝ Մասնակիցը ներկայացրել է 10 մլն. ՀՀ դրամը չգերազանցող՝ 9834555.60 ինը միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսունհինգ դրամ վաթսուն լումայի չափով գնային առաջարկ, որպիսի պայմաններում Մասնակիցը հայտի ապահովում ներկայացնելու պարտականություն չի ունեցել:

3.2. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերի համաձայն. «1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: (...):

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: **Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները:** Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը **հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում**: (...):

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն. «9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող **առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում**: (...):»

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի **(այսուհետև նաև՝ Կարգ)** 26-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն. «26. (...): Գնահատող հանձնաժողովի՝ 2) գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: (...). 5) նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա **հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը**: (...).»

Կարգի 43-րդ կետի համաձայն «43. Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) **հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (...), հրապարակում է տեղեկագրում:**»

Վերոգրյալից հետևում է, որ հայտերի բացման նիստի օրը և ժամին հայտերի բացման նպատակով հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ: Հայտերի բացման նիստից հետո կազմվում է հայտերի բացման նիստի արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները և հանձնաժողովի նիստի քարտուղարը: Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված տարբերակը հրապարակվում է Տեղեկագրում:

Գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը Տեղեկագրում հրապարակելու պահանջը վերը գրված իրավական նորմերով սահմանելը ինքնանպատակ չէ, այն ուղղված է մասնակիցներին և այլ անձանց հայտերի բացման և հայտերի գնահատման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելուն ու այդ տեղեկատվության հրապարակայնությունը ապահովելուն, իսկ արձանագրությունը ստորագրելու և ստորագրված արձանագրության բնօրինակի արտատպումը Տեղեկագրում հրապարակելու պահանջը միտված է վկայելու այն փաստը, որ հանձնաժողովի քարտուղարը և արձանագրությամբ նշված հանձնաժողովի անդամները իրականում մասնակցել են գնահատող հանձնաժողովի տվյալ նիստին, այդ կերպ նաև փաստելով այդ նիստի իրավազորությունը և այն, որ արձանագրությամբ արձանագրված որոշումները իրականում ընդունել են դրանում նշված հանձնաժողովի անդամները: Հետևաբար, հանձնաժողովի քարտուղարի և հանձնաժողովի անդամների մասնակցությունը հանձնաժողովի նիստին, հանձնաժողովի նիստի իրավազորությունը և այդ նիստի ժամանակ ընդունված որոշումների օրինականությունը կարող է առնվել կասկածի տակ, եթե գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ կազմված արձանագրությունում բացակայում են հանձնաժողովի քարտուղարի և հանձնաժողովի անդամների ստորագրությունները:

Այսպիսով, ինչպես երևում է սույն բողոքի փաստերից՝ Մասնակցին ուղարկված Արձանագրությունը Մրցույթի գնահատող հանձնաժողովը չի ստորագրել, ինչպես նաև այն չի հրապարակվել Տեղեկագրում: Բայց ինչպես պարզեցինք վերոգրյալով Արձանագրությունը հանձնաժողովի կողմից ստորագրելը և ստորագրված արձանագրության արտատպումը տեղեկագրում հրապարակելը պարտադիր է: Բացի այդ, Արձանագրության չստորագրված լինելու փաստով պայմանավորված կասկածի տակ է առնվում այդ նիստին Մրցույթի հանձնաժողովի քարտուղարի և հանձնաժողովի անդամների մասնակցած լինելու, գնահատող հանձնաժողովի տվյալ նիստը իրավազոր լինելու և այդ նիստի ժամանակ ընդունված որոշումների օրինականան լինելու հանգամանքները:

Ուստի կարծում ենք, որ նման պայմաններում արձանագրությամբ արձանագրված հանձնաժողովի անդամների որոշումները չեն կարող համարվել օրինական:

3.3. Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն. «2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ 1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, (...)»:

Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն. «2. Գնումների հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝ 8) ընտրված մասնակցին որոշելու համար կիրառվելիք չափանիշները.»:

*Ըստ վերը նշված նորմերի, գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատվում են բավարար, եթե դրանք ներկայացվել են գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան: Իսկ առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչվում է այն մասնակիցը, ով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից ներկայացրել է **նվազագույն գնային առաջարկը**: Ընդ որում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների գնահատումը և համեմատումը իրականացվում է առանց գնային առաջարկում նշված ավելացված արժեքի հարկի գումարի:*

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը կարող ենք եզրահանգել, եթե Մրցույթի գնահատող հանձնաժողովը գործեր իրավաչափ և հայտի ապահովում չներկայացնելու հիմքով չմերժեր Մասնակցի հայտը, ապա հայտերի գնահատման արդյունքում հնարավոր է, որ 1-ին չափաբաժնի մասով «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի փոխարեն Մրցույթի առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչվեր «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ն, քանի որ Մրցույթի 1-ին չափաբաժնին վերջինիս ներկայացրած գնային առաջարկը բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներից ամենացածրն է:

4. Պահանջը

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածը և 51-րդ հոդվածի 1-ին մասը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Խնդրում եմ՝

պարտավորեցնել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

4.1. Դադարեցնել թիվ 3 արձանագրությամբ «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները:

4.2. Դադարեցնել թիվ 3.1 արձանագրությամբ «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու ու լուսավորման և լամպերի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու վերաբերյալ որոշումները:

4.3. Նորից գնահատել 1-ին չափաբաժնի մասով մասնակիցների ներկայացրած հայտերը՝ գնահատման մեջ ներառելով «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի հայտը:

5. Միաժամանակ խնդրում եմ բողոքը բավարարելու դեպքում բողոքարկման վճարը փոխանցել «Արարատբանկ» ԲԲԸ-ի 1510024682480100 հաշվեհամարին:

6. Կից ներկայացնում եմ՝

- բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը,
- «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման միասնական ռեեստրի գրանցման թերթիկը,
- Ավետիսյան Հայկ Վազիրի անձնագրի պատճենը,
- Հարություն Օհանյանի անձը հաստատող փաստաթղթի և փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենները,
- Հարություն Օհանյանին տրված լիազորագիրը,
- թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 3 և 3.1 արձանագրությունների պատճենները,
- ՀՀ կենտրոնական բանկի կայքէջի՝ https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx?DateFrom=2020-03-19&DateTo=2020-03-19&ISOCodes=USD, արտատպումը՝ 19.03.2020թ.-ին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի վերաբերյալ,
- թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցներ՝ «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի, «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի, «Արմլեդ» ՍՊԸ-ի և «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի գնային առաջարկները:

Բողոքաբերի ներկայացուցիչ Հարություն Օհանյան _____